

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----»-----2019թ.

N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի
N 226-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՎԴ/0684/05/16 օրինական ուժի մեջ մտած վճիռը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածով, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Անվավեր ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 8-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» N 226-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 226-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի **հ.226-Ա** որոշմամբ Երևան քաղաքի ավագանին թույլատրել է Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Գ.Շերամի փողոցի **հ.39** շենքի **հ.55/1` 20.5**քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ելենա Պողոսյանին:

Երևանի քաղաքապետի **09.10.2014** թվականի **հ.3844-Ա** որոշմամբ Երևան համայնքի սեփականությունը համարվող Գ.Շերամի փողոցի **հ.39** շենքի **20.5**քմ մակերեսով **հ.55/1** բնակարանը նվիրվել է Ելենա Պողոսյանին՝ որպես սեփականություն:

Երևանի քաղաքապետի **03.03.2015** թվականի **հ.532-Ա** որոշմամբ Երևանի քաղաքապետի **09.10.2014** թվականի **հ.3844-Ա** որոշման **1-ին** կետում կատարվել է փոփոխություն և նախատեսվել է որպես սեփականություն Ելենա Պողոսյանին նվիրել Գ.Շերամի փողոցի **հ.39** շենքի **20.5**քմ մակերեսով **հ.55/1** բնակարանը և ընդհանուր օգտագործման **30.4**քմ մակերեսով (օժանդակ և կոմունալ հարմարություններ) տարածքի Երևան համայնքի մասը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի **19.02.2016** թվականի թիվ **ԱՏ-17/02/2016-1-0236** տեղեկանքի համաձայն՝ Երևանի քաղաքապետի **09.10.2014** թվականի **հ.3844-Ա**, **03.03.2015** թվականի **հ.532-Ա** որոշումների և **25.03.2015** թվականի **2750** նվիրատվության պայմանագրի հիման վրա Գ. Շերամի փողոցի **հ.39** շենքի, **հ.55/1** հասցեի անշարժ գույքը (սեփականության իրավունքը՝ **20.5**քմ մակերեսով բնակարանի և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը՝ **30.4**քմ մակերեսով կոմունալ և օժանդակ մակերեսների նկատմամբ) գրանցվել է Ելենա Պողոսյանի անվամբ:

Երևանի քաղաքապետի **16.08.2011** թվականի **հ.3724-Ա** որոշմամբ Երևան համայնքի սեփականությունը համարվող /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման **06.04.2011**թ. **հ.2711758** վկայական/, Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Շերամի փողոցի **հ.39** շենքի **հ.55/2` 9.1**քմ ընդհանուր մակերեսով սենյակը նվիրվել է նույն բնակարանի բնակիչ՝ Գրետա Մելքոնյանին՝ որպես սեփականություն, իսկ **30.4**քմ ընդհանուր մակերեսով խոհանոցը, պատշգամբը և մյուս կոմունալ հարմարությունները թողնվել են մյուս սեփականատերերի հետ համատեղ սեփականության իրավունքով:

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի **02.03.2016** թվականի **հ.ԱՏ-29/02/2016-1-0406** տեղեկանքի համաձայն՝ Գ.Շերամի փողոց **39** շենք, **55/2** բնակարան հասցեի անշարժ գույքի **9.1**քմ մակերեսը սեփականության, իսկ **30.4**քմ մակերեսը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Գրետա Գասպարի Մելքոնյանի անվամբ /հիմք՝ **22.09.2015**թ. թիվ **2841** նվիրատվության պայմանագիրը/:

Գրետա Մելքոնյանը դիմել է ՀՀ վարչական դատարան Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի **հ.226-Ա**, Երևանի քաղաքապետի **09.10.2014** թվականի **հ.3844-Ա** որոշումներն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ Երևանի քաղաքապետի **03.03.2015** թվականի **հ.532-Ա** որոշումը, անշարժ գույքի նվիրատվության մասին **21.01.2015** թվականի և **25.03.2015** թվականի պայմանագրերն ու դրանց հիման վրա կատարված պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջներով:

ՀՀ վարչական դատարանի **02.12.2016** թվականի թիվ **ՎԴ/0684/05/16** օրինական ուժի մեջ մտած վճռով բավարարվել է Գրետա Մելքոնյանի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի,

երրորդ անձ՝ Ելենա Պողոսյանի՝ Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի **h.226-Ա**, Երևանի քաղաքապետի **09.10.2014** թվականի **h.3844-Ա** որոշումներն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ Երևանի քաղաքապետի **03.03.2015** թվականի **h.532-Ա** որոշումը, անշարժ գույքի նվիրատվության մասին **21.01.2015** թվականի և **25.03.2015** թվականի պայմանագրերն ու դրանց հիման վրա կատարված պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Նշված վճռով դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ հայցվոր Գրետա Մելքոնյանը դեռևս **1975** թվականից հաշվառված լինելով նախկին Շերամի փողոց **h.39** շենքի **h.55** բնակարանում և փաստացի նույն հասցեում բնակվելով Երևան քաղաքի ավագանու **10.12.2013** թվականի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման **2014** թվականի ծրագրի վերաբերյալ» թիվ **95-Ն** որոշման **4-րդ** կետի **1-ին** ենթակետի հիմքով ունեցել է վեճի առարկա գույքն անհատույց ստանալու իրավունք:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի **07.03.2018** թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է և թիվ **ՎԴ/0684/05/16** վարչական գործով ՀՀ վարչական դատարանի **2016** թվականի դեկտեմբերի **2-ի** վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի **27.06.2018** թվականի որոշմամբ թիվ **ՎԴ/0684/05/16** վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի **07.03.2018** թվականի որոշման դեմ Երևանի քաղաքապետարանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի **04.02.2019** թվականի **h.US-31/01/2019-1-0238** տեղեկանքի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի **02.12.2016** թվականի թիվ **ՎԴ/0684/05/16** վճռի հիման վրա Երևան քաղաքի Գ.Շերամի փողոցի **h.39** շենքի **h.55/1** բնակարանի նկատմամբ Ելենա Պողոսյանի անվամբ **31.03.2015** թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը դադարեցվել է:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի **5-րդ** հոդվածի **5-րդ** մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի **38-րդ** հոդվածի **1-ին** մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի ակտով, եթե ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվել կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի **38-րդ** հոդվածի **2-րդ** մասի համաձայն՝ անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտն իր իրավական ուժը կորցնում է այն անվավեր ճանաչելու մասին ակտի ուժի մեջ մտնելու պահից (*ex nunc*), բացառությամբ սույն հոդվածի **3-րդ** մասով սահմանված դեպքերի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ՀՀ վարչական դատարանի **02.12.2016** թվականի թիվ **ՎԴ/0684/05/16** օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու «Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի **N 226-Ա** որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 226-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության կամ քացակայության մասին

Հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատարանի **02.12.2016** թվականի թիվ ՎԴ/**0684/05/16** օրինական ուժի մեջ մտած վճռով անվավեր են ճանաչվել Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի N **226-Ա** որոշումը, Երևանի քաղաքապետի **08.10.2014** թվականի N **3844-Ա** ու Երևանի քաղաքապետի **03.03.2015** թվականի N **532-Ա** որոշումները՝ Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի N.**226-Ա** որոշումն անվավեր ճանաչելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն է առաջացել ընդունել նաև Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներ՝ Երևանի քաղաքապետի **2014** թվականի հոկտեմբերի **8-ի** N **3844-Ա** և **2015** թվականի մարտի **3-ի** N **532-Ա** որոշումներն անվավեր ճանաչելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 226-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Երևան քաղաքի ավագանու **08.10.2014** թվականի «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» **հ.226-Ա** որոշումն անվավեր ճանաչելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ